# ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ
# ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
# N ՆՄԲԿ-ԳՀԾՁԲ-26/10

ք. Երևան

«05» 12 2025թ.

<<Նորք-Մարաշ>> բժշկական կենտրոն>> ՓԲԸ-ն, ի դեմս տնօրենի պ/կ Կ. Խաչիյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, այսուհետ «Պատվիրատու», մի կողմից, և Լևոն Ղազարյան Ա/Ձ-ն, ի դեմս Լ. Ջաղարյանի, այսուհետ «Կատարող» մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է ծառայությունների մատուցմաս պարտավորությունը (այսուհետ՝ ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե մատուցվել է պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող ծառայություն.

ա) Չընդունել ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ծառայությունը պայմանագրին համապատասխանող ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

**2.2 Պատվիրատուն պարտավոր է՝**

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված ծառայության արդյունքը, իսկ ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս կողմից մատուցված պատշաճ ծառայության դիմաց վճարման ենթակա գումարները, իսկ վճարան ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու պատշաճ մատուցված ծառայության դիմաց վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված վճարման ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

**2.4 Կատարողը պարտավոր է՝**

2.4.1 Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել ծառայության պատշաճ մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Որակավորման և պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Մատուցված ծառայությունն ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ծառայության մատուցման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Կատարողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

3.2 Եթե մատուցված ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 3.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 5 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

3.3 Եթե մատուցված ծառայությունը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 3.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.4 Եթե պայմանագրի 3.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում մատուցված ծառայությունը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատուցված ծառայությունը համարվում է ընդունված և պայմանագրի 3.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա ծառայության գինը կազմում է 5000000 (հինգ միլիոն) ՀՀ դրամ:

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած ծառայության դիմաց վճարում է պայմանագրի 3-րդ բաժնով նախատեսված կարգով ընդունելու դեպքում՝ ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված պայմաններով, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 30-ը:

Ընդ որում վճարում կատարվում է սույն պայմանագրի վճարման ժամանակացույցով սահմանված ժամկետներում, հինգ աշխատանքային օրվա ընթացքում:

4.3 Ավտոմեքենաների, սարքերի և սարքավորումների վերանորոգման ծառայությունների դեպքում, մատուցված ծառայությունների դիմաց վճարումներին իրականացվում են հետևյալ բանաձևով՝ ՎԳ=ՄԳ/ՆԳxԾxՔ, որտեղ՝

ՎԳ-ն պայմանագրով սահմանված առանձին տեսակի ծառայությունների մատուցման դիմաց վճարվող գումարն է.

ՄԳ-ն ընտրված մասնակցի առաջարկած հանրագումարային գինն է.

ՆԳ-ն ծառայության մատուցման համար սահմանված առավելագույն միավոր գների հանրագումարն է.

Ծ-ն մատուցված ծառայության առավելագույն միավորի գինն է.

Ք-ն մատուցված ծառայության քանակն է:

2. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում ծառայության մատուցման՝ պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով: Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև ծառայությունը սույն պայմանագրով սահմանված ժամկետում մատուցելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

5.3 Պայմանագրով նախատեսված ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն սահմանված ժամկետում չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորություններն ամբողջությամբ և պատշաճ՝ պայմանագրով սահմանված պահանջներին համապատասխան կատարելուց:

## 6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

## 7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

7.2 Պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ծառայության ծավալների կամ ձեռք բերվող ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.6 Եթե պայմանագիրն իրականացվում է գործակալության պայմանագիր կնքելու միջոցով

1) Կատարողը պատասխանատվություն է կրում գործակալի պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար.

2) պայմանագրի կատարման ընթացքում գործակալի փոփոխման դեպքում Կատարողը գրավոր տեղեկացնում է Պատվիրատուին՝ տրամադրելով գործակալության պայմանագրի պատճենը և դրա կողմ հանդիսացող անձի տվյալները՝ փոփոխությունը կատարվելու օրվանից հինգ աշխատանքային օրվա ընթացքում:[1]

7.7 Եթե պայմանագիրն իրականացվում է համատեղ գործունեության (կոնսորցիումի) պայմանագիր կնքելու միջոցով, ապա այդ պայմանագրի մասնակիցները կրում են համատեղ և համապարտ պատասխանատվություն: Ընդ որում, կոնսորցիումի անդամի կոնսորցիումից դուրս գալու դեպքում պայմանագիրը միակողմանիորեն լուծվում է և կոնսորցիումի անդամների նկատմամբ կիրառվում են պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցները:[2]

7.8 Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի գրավոր առաջարկի առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի համար ծառայության մատուցման պահանջը չի վերացել, իսկ Կատարողի գրավոր առաջարկը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե ծառայությունների մատուցման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 7 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավելի քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

7.9 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման շրջանակներից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.10 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.11 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Պատվիրատուն այն ուղարկում է նաև Կատարողի էլեկտրոնային փոստին:

7.12 Կատարողն իրավունք ունի պայմանագրի կնքումից հետո Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 48-րդ գլխով սահմանված դեպքերում և կարգով կատարել գնման պայմանագրից ծագող դրամական պահանջի զիջում՝ պահանջի զիջման դիմաց ֆինանսավորման (ֆակտորինգի) պայմանագրի (այսուհետ՝ ֆակտորինգի պայմանագիր) հիման վրա: Ֆակտորինգի պայմանագիրը պետք է սահմանի, որ ֆինանսական գործակալը համաձայն է, որ պայմանագրով նախատեսված հիմքերի առկայության դեպքում Պատվիրատուն վճարումներն իրականացնելիս ապահովի Կատարողի նկատմամբ տույժերի ու տուգանքների հաշվարկումը և հաշվանցումը վճարվելիք գումարների հետ՝ անկախ պահանջը զիջված լինելու հանգամանքից: Ընդ որում, ֆակտորինգի պայմանագրի հիման վրա պահանջի զիջման մասին գրավոր ծանուցումը (հավելված N 4) ստանալու դեպքում Պատվիրատուն պայմանագրով սահմանված վճարումը կատարում է ֆինանսական գործակալին, եթե ծանուցումը ստացվել է Պատվիրատուի կողմից բանկին վճարման հանձնարարական տալու օրվան նախորդող օրը:

---

[1] Սույն կետը հանվում է պայմանագրից, եթե պայմանագիրը չի իրականացվում գործակալության պայմանագիր կնքելու միջոցով:

[2] Սույն կետը հանվում է պայմանագրից, եթե պայմանագիրը չի իրականացվում համատեղ գործունեության (կոնսորցիումի) պայմանագիր կնքելու միջոցով:

7.13 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

7.14 Սույն պայմանագիրը կազմված է _____ էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.15 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

7.16 Պայմանագրով նախատեսված ծառայությունների մատուցումը իրականացվում է այդ նպատակով ֆինանսական միջոցների առկայության և դրա հիման վրա կողմերի միջև համապատասխան համաձայնագրի կնքման միջոցով: Պայմանագիրը լուծվում է, եթե այն կնքելու օրվան հաջորդող վեց ամսվա ընթացքում այդ նպատակով պայմանագրի կատարման համար ֆինանսական միջոցներ չեն նախատեսվում: Ընդ որում յուրաքանչյուր հաջորդ համաձայնագիրը կնքելու համար ֆինանսական միջոցների նախատեսման համար սույն կետով տրված վեցամսյա ժամանակահատվածի հաշվարկը սկսվում նախորդ համաձայնագրով սահմանված ծառայությունների մատակարարման արդյունքը ողջ ծավալով պատվիրատուի կողմից ընդունվելու օրվանից: Եթե պայմանագրի կատարման համար հատկացված ֆինանսական միջոցների չափը գերազանցում է գնումների բազային միավորի քսանհինգապատիկը, ապա Գնորդի կողմից համաձայնագիր կկնքվի, եթե Վաճառողի կողմից տուժանքի ձևով ներկայացված որակավորման և պայմանագրի ապահովումները փոխարինվում են երաշխիքով կամ կանխիկ փողով՝ հաշվի առնելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշման N 1 հավելվածի 32-րդ կետի 1-ին ենթակետի «գ» և 17-րդ ենթակետի «բ» պարբերությունների պահանջները: Ընդ որում, Կատարողը համաձայնագիրը կնքում, իսկ տուժանքի ձևով ներկայացված որակավորման և պայմանագրի ապահովումների փոխարինման դեպքում նաև նոր ապահովները Պատվիրատուին ներկայացնում է համաձայնագիր կնքելու ծանուցումը ստանալու օրվանից տասնհինգ աշխատանքային օրվա ընթացքում: Հակառակ դեպքում պայմանագիրը Պատվիրատուի կողմից միակողմանիորեն լուծվում է:8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

| ՊԱՏՎԻՐԱՏՈՒ | ԿԱՏԱՐՈՂ |
|---|---|
| <<Նորք Մարաշ>> բժշկական կենտրոն>> ՓԲԸ | Լևոն Ղազարյան Ա/Ձ |
| ք. Երևան, Արմենակյան 108/4 | ՀՀ Արագածոտնի մարզ, գ. Աշնակ, Վրեժ Իսրաելյան փ. 77տուն |
| ՀՎՀՀ 01508793 | ՀՎՀՀ 54696665 |
| <<ԱՄԻՕ ԲԱՆԿ>> ՓԲԸ | բանկ՝ «Ա. Դ. Ագ ի. Ա. Բ» ՓԲԸ |
| Հ/Հ 1150001612200100 | հհ 22057967531900 |
| | levon.khazaryan93@mail.ru |
| | 095-80-83-64 |
| | Լ. Ղազարյան |
| (ստորագրություն) | (ստորագրություն) |
| Կ.Տ. | Կ.Տ. |

Հավելված N 1
«05» դեկտեմբերի 2025 թ. կնքված
ՆՄԲԿ-ԳՀԾՁԲ-26/10 ծածկագրով պայմանագրի

### ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ-ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

| Չ/Հ | CPV կոդը | Գնման առարկայի անվանումը | Չափման միավորը | Միավորի գինը | Գնման ենթակա քանակները 2026թ. | Ընդհանուր արժեք ՀՀ դրամով |
|---|---|---|---|---|---|---|
| 1 | 50311240/501 | Տպիչների վերանորոգման ծառայություններ | դրամ | 1500000 | 1 | 1500000 |
| 2 | 50311250/501 | տպիչների քարտրիճների լիցքավորման և վերանորոգման ծառայություններ | դրամ | 3500000 | 1 | 3500000 |

Ծառայությունները սկսվում են մատուցվել 2025 թվականի հունվարի 1-ից` եթե դրան համաձայն է Կատարողը, հակառակ դեպքում` պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից հաշված 21-րդ օրվանից: Ծառայությունների մատուցման վերջնաժամկետը 31.12.2025 թվականն է:

1-ին չափաբաժնի տեխնիկական պայմանները.

## ՎԳ=ՄԳ/ՆԳxԾxՔ, գործակիցն արդեն կիրառված է. ըստ բանաձևի`

| | Գնման առարկայի որակական և այլ բնութագրիչ հատկանիշները | Միավոր գինը /ՀՀ դրամ/ |
|---|---|---|
| | HP LaserJet 1022 լազերային տպիչի | |
| 1 | Դիագնոստիկա | 212,20 |
| 2 | Պրոֆիլակտիկա | 353,92 |
| 3 | Վերանորոգում | 705,21 |
| 4 | Վառարանի թերմոթաղանթի փոխարինում նորով | 422,90 |
| 5 | Վառարանի նորոգում | 422,90 |
| 6 | Մայր պլատաի (formator) փոխարինում նորով | 2114,89 |
| 7 | Մայր պլատաի (formator) նորոգում | 564,62 |
| 8 | Սնուցման պլատայի փոխարինում նորով | 1056,51 |
| 9 | Սնուցման պլատայի վերանորոգում | 564,62 |
| 10 | Վառարանի Ռետինե լիսեռի փոխարինում նորով | 422,90 |
| 11 | Թղթի մատուցման ռետինե լիսեռի փոխարինում նորով | 353,92 |
| 12 | Ատամնանիվի փոխարինում նորով | 353,92 |
| | HP LaserJet P2035 լազերային տպիչի | |
| 1 | Դիագնոստիկա | 212,20 |
| 2 | Պրոֆիլակտիկա | 353,92 |
| 3 | Վերանորոգում | 705,21 |
| 4 | Վառարանի թերմոթաղանթի փոխարինում նորով | 422,90 |
| 5 | Վառարանի նորոգում | 422,90 |
| 6 | Մայր պլատաի (formator) փոխարինում նորով | 2114,89 |
| 7 | Մայր պլատաի (formator) նորոգում | 564,62 |
| 8 | Սնուցման պլատայի փոխարինում նորով | 1056,51 |
| 9 | Սնուցման պլատայի վերանորոգում | 564,62 |
| 10 | Վառարանի Ռետինե լիսեռի փոխարինում նորով | 422,90 |
| 11 | Թղթի մատուցման ռետինե լիսեռի փոխարինում նորով | 353,92 |
| 12 | Ատամնանիվի փոխարինում նորով | 353,92 |

| | | | |
|---|---|---|---|
| | HP LaserJet M553 լազերային տպիչի | | |
| 1 | Դիագնոստիկա | | 212,20 |
| 2 | Պրոֆիլակտիկա | | 353,92 |
| 3 | Վերանորոգում | | 705,21 |
| 4 | Վառարանի թերմոթաղանթի փոխարինում նորով | | 422,90 |
| 5 | Վառարանի նորոգում | | 422,90 |
| 6 | Մայր պլատաի (formator) փոխարինում նորով | | 2114,89 |
| 7 | Մայր պլատաի (formator) նորոգում | | 564,62 |
| 8 | Սնուցման պլատայի փոխարինում նորով | | 1056,51 |
| 9 | Սնուցման պլատայի վերանորոգում | | 564,62 |
| 10 | Վառարանի Ռետինե լիսեռի փոխարինում նորով | | 422,90 |
| 11 | Թղթի մատուցման ռետինե լիսեռի փոխարինում նորով | | 353,92 |
| 12 | Ատամնանիվի փոխարինում նորով | | 353,92 |
| | HP LaserJet M1319f MFP լազերային տպիչի | | |
| 1 | Դիագնոստիկա | | 212,20 |
| 2 | Պրոֆիլակտիկա | | 353,92 |
| 3 | Վերանորոգում | | 705,21 |
| 4 | Վառարանի թերմոթաղանթի փոխարինում նորով | | 422,90 |
| 5 | Վառարանի նորոգում | | 422,90 |
| 6 | Մայր պլատաի (formator) փոխարինում նորով | | 2114,89 |
| 7 | Մայր պլատաի (formator) նորոգում | | 564,62 |
| 8 | Սնուցման պլատայի փոխարինում նորով | | 1056,51 |
| 9 | Սնուցման պլատայի վերանորոգում | | 564,62 |
| 10 | ԱԴՖ -ի վերանորոգում | | 705,21 |
| 11 | Սկաների լամպի փոխարինում նորով | | 705,21 |
| 12 | Սկաների վերանորոգում | | 353,92 |
| 13 | Վառարանի Ռետինե լիսեռի փոխարինում նորով | | 422,90 |
| 14 | Թղթի մատուցման ռետինե լիսեռի փոխարինում նորով | | 353,92 |
| 15 | Ատամնանիվի փոխարինում նորով | | 353,92 |
| | Canon i-SENSYS MF461DW | | |
| 1 | Դիագնոստիկա | | 524,88 |
| 2 | Պրոֆիլակտիկա | | 524,88 |
| 3 | Վերանորոգում | | 2999,32 |
| 4 | Վառարանի թերմոթաղանթի փոխարինում նորով | | 2999,32 |
| 5 | Վառարանի նորոգում | | 2624,40 |
| 6 | Մայր պլատաի (formator) փոխարինում նորով | | 5248,81 |
| 7 | Մայր պլատաի (formator) նորոգում | | 2624,40 |
| 8 | Սնուցման պլատայի փոխարինում նորով | | 5623,72 |
| 9 | Սնուցման պլատայի վերանորոգում | | 2624,40 |
| 10 | Վառարանի Ռետինե լիսեռի փոխարինում նորով | | 2999,32 |
| 11 | Թղթի մատուցման ռետինե լիսեռի փոխարինում նորով | | 1124,74 |
| 12 | Ատամնանիվի փոխարինում նորով | | 1124,74 |
| | Canon i-SENSYS MF231 լազերային տպիչի | | |
| 1 | Դիագնոստիկա | | 212,20 |
| 2 | Պրոֆիլակտիկա | | 353,92 |
| 3 | Վերանորոգում | | 705,21 |
| 4 | Վառարանի թերմոթաղանթի փոխարինում նորով | | 422,90 |
| 5 | Վառարանի նորոգում | | 422,90 |
| 6 | Մայր պլատաի (formator) փոխարինում նորով | | 2114,89 |
| 7 | Մայր պլատաի (formator) նորոգում | | 564,62 |
| 8 | Սնուցման պլատայի փոխարինում նորով | | 1056,51 |
| 9 | Սնուցման պլատայի վերանորոգում | | 564,62 |
| 10 | ԱԴՖ -ի վերանորոգում | | 705,21 |
| 11 | Սկաների լամպի փոխարինում նորով | | 705,21 |
| 12 | Սկաների վերանորոգում | | 353,92 |

| | | |
|---|---|---|
| 13 | Վառարանի Ռետինե լիսեռի փոխարինում նորով | 422,90 |
| 14 | Թղթի մատուցման ռետինե լիսեռի փոխարինում նորով | 353,92 |
| 15 | Ատամնանիվի փոխարինում նորով | 353,92 |
| | Canon i-SENSYS MF237 լազերային տպիչի | |
| 1 | Դիագնոստիկա | 212,20 |
| 2 | Պրոֆիլակտիկա | 353,92 |
| 3 | Վերանորոգում | 705,21 |
| 4 | Վառարանի թերմոթաղանթի փոխարինում նորով | 422,90 |
| 5 | Վառարանի նորոգում | 422,90 |
| 6 | Մայր պլատաի (formator) փոխարինում նորով | 2114,89 |
| 7 | Մայր պլատաի (formator) նորոգում | 564,62 |
| 8 | Սնուցման պլատայի փոխարինում նորով | 1056,51 |
| 9 | Սնուցման պլատայի վերանորոգում | 564,62 |
| 10 | ԱԴՖ -ի վերանորոգում | 705,21 |
| 11 | Սկաների լամպի փոխարինում նորով | 705,21 |
| 12 | Սկաների վերանորոգում | 353,92 |
| 13 | Վառարանի Ռետինե լիսեռի փոխարինում նորով | 422,90 |
| 14 | Թղթի մատուցման ռետինե լիսեռի փոխարինում նորով | 353,92 |
| 15 | Ատամնանիվի փոխարինում նորով | 353,92 |
| | Canon i-SENSYS MF244 լազերային տպիչի | |
| 1 | Դիագնոստիկա | 212,20 |
| 2 | Պրոֆիլակտիկա | 353,92 |
| 3 | Վերանորոգում | 705,21 |
| 4 | Վառարանի թերմոթաղանթի փոխարինում նորով | 422,90 |
| 5 | Վառարանի նորոգում | 422,90 |
| 6 | Մայր պլատաի (formator) փոխարինում նորով | 2114,89 |
| 7 | Մայր պլատաի (formator) նորոգում | 564,62 |
| 8 | Սնուցման պլատայի փոխարինում նորով | 1056,51 |
| 9 | Սնուցման պլատայի վերանորոգում | 564,62 |
| 10 | ԱԴՖ -ի վերանորոգում | 705,21 |
| 11 | Սկաների լամպի փոխարինում նորով | 705,21 |
| 12 | Սկաների վերանորոգում | 353,92 |
| 13 | Վառարանի Ռետինե լիսեռի փոխարինում նորով | 422,90 |
| 14 | Թղթի մատուցման ռետինե լիսեռի փոխարինում նորով | 353,92 |
| 15 | Ատամնանիվի փոխարինում նորով | 353,92 |
| | Canon i-SENSYS LBP2900 լազերային տպիչի | |
| 1 | Դիագնոստիկա | 212,20 |
| 2 | Պրոֆիլակտիկա | 353,92 |
| 3 | Վերանորոգում | 705,21 |
| 4 | Վառարանի թերմոթաղանթի փոխարինում նորով | 422,90 |
| 5 | Վառարանի նորոգում | 422,90 |
| 6 | Մայր պլատաի (formator) փոխարինում նորով | 2114,89 |
| 7 | Մայր պլատաի (formator) նորոգում | 564,62 |
| 8 | Սնուցման պլատայի փոխարինում նորով | 1056,51 |
| 9 | Սնուցման պլատայի վերանորոգում | 564,62 |
| 10 | Վառարանի Ռետինե լիսեռի փոխարինում նորով | 422,90 |
| 11 | Թղթի մատուցման ռետինե լիսեռի փոխարինում նորով | 353,92 |
| 12 | Ատամնանիվի փոխարինում նորով | 353,92 |
| | Canon i-SENSYS MF3010 լազերային տպիչի | |
| 1 | Դիագնոստիկա | 212,20 |
| 2 | Պրոֆիլակտիկա | 353,92 |
| 3 | Վերանորոգում | 705,21 |
| 4 | Վառարանի թերմոթաղանթի փոխարինում նորով | 422,90 |
| 5 | Վառարանի նորոգում | 422,90 |
| 6 | Մայր պլատաի (formator) փոխարինում նորով | 2114,89 |

| | | |
|---|---|---|
| 7 | Մայր պլատաի (formator) նորոգում | 564,62 |
| 8 | Սնուցման պլատայի փոխարինում նորով | 1056,51 |
| 9 | Սնուցման պլատայի վերանորոգում | 564,62 |
| 10 | ԱԴՖ -ի վերանորոգում | 705,21 |
| 11 | Սկաների լամպի փոխարինում նորով | 705,21 |
| 12 | Սկաների վերանորոգում | 353,92 |
| 13 | Վառարանի Ռետինե լիսեռի փոխարինում նորով | 422,90 |
| 14 | Թղթի մատուցման ռետինե լիսեռի փոխարինում նորով | 353,92 |
| 15 | Ատամնանիվի փոխարինում նորով | 353,92 |
| | Canon LBP 3020 լազերային տպիչի | |
| 1 | Դիագնոստիկա | 212,20 |
| 2 | Պրոֆիլակտիկա | 353,92 |
| 3 | Վերանորոգում | 705,21 |
| 4 | Վառարանի թերմոթաղանթի փոխարինում նորով | 422,90 |
| 5 | Վառարանի նորոգում | 422,90 |
| 6 | Մայր պլատաի (formator) փոխարինում նորով | 2114,89 |
| 7 | Մայր պլատաի (formator) նորոգում | 564,62 |
| 8 | Սնուցման պլատայի փոխարինում նորով | 1056,51 |
| 9 | Սնուցման պլատայի վերանորոգում | 564,62 |
| 10 | Վառարանի Ռետինե լիսեռի փոխարինում նորով | 422,90 |
| 11 | Թղթի մատուցման ռետինե լիսեռի փոխարինում նորով | 353,92 |
| 12 | Ատամնանիվի փոխարինում նորով | 353,92 |
| | Canon i-SENSYS MF3228 լազերային տպիչի | |
| 1 | Դիագնոստիկա | 212,20 |
| 2 | Պրոֆիլակտիկա | 353,92 |
| 3 | Վերանորոգում | 705,21 |
| 4 | Վառարանի թերմոթաղանթի փոխարինում նորով | 422,90 |
| 5 | Վառարանի նորոգում | 422,90 |
| 6 | Մայր պլատաի (formator) փոխարինում նորով | 2114,89 |
| 7 | Մայր պլատաի (formator) նորոգում | 564,62 |
| 8 | Սնուցման պլատայի փոխարինում նորով | 1056,51 |
| 9 | Սնուցման պլատայի վերանորոգում | 564,62 |
| 10 | ԱԴՖ -ի վերանորոգում | 705,21 |
| 11 | Սկաների լամպի փոխարինում նորով | 705,21 |
| 12 | Սկաների վերանորոգում | 353,92 |
| 13 | Վառարանի Ռետինե լիսեռի փոխարինում նորով | 422,90 |
| 14 | Թղթի մատուցման ռետինե լիսեռի փոխարինում նորով | 353,92 |
| 15 | Ատամնանիվի փոխարինում նորով | 353,92 |
| | Canon i-SENSYS MF4410 լազերային տպիչի | |
| 1 | Դիագնոստիկա | 212,20 |
| 2 | Պրոֆիլակտիկա | 353,92 |
| 3 | Վերանորոգում | 705,21 |
| 4 | Վառարանի թերմոթաղանթի փոխարինում նորով | 422,90 |
| 5 | Վառարանի նորոգում | 422,90 |
| 6 | Մայր պլատաի (formator) փոխարինում նորով | 2114,89 |
| 7 | Մայր պլատաի (formator) նորոգում | 564,62 |
| 8 | Սնուցման պլատայի փոխարինում նորով | 1056,51 |
| 9 | Սնուցման պլատայի վերանորոգում | 564,62 |
| 10 | ԱԴՖ -ի վերանորոգում | 705,21 |
| 11 | Սկաների լամպի փոխարինում նորով | 705,21 |
| 12 | Սկաների վերանորոգում | 353,92 |
| 13 | Վառարանի Ռետինե լիսեռի փոխարինում նորով | 422,90 |
| 14 | Թղթի մատուցման ռետինե լիսեռի փոխարինում նորով | 353,92 |
| 15 | Ատամնանիվի փոխարինում նորով | 353,92 |
| | Canon i-SENSYS LBP6030 լազերային տպիչի | |

| | | |
|---|---|---|
| 1 | Դիագնոստիկա | 212,20 |
| 2 | Պրոֆիլակտիկա | 353,92 |
| 3 | Վերանորոգում | 705,21 |
| 4 | Վառարանի թերմոթաղանթի փոխարինում նորով | 422,90 |
| 5 | Վառարանի նորոգում | 422,90 |
| 6 | Մայր պլատաի (formator) փոխարինում նորով | 2114,89 |
| 7 | Մայր պլատաի (formator) նորոգում | 564,62 |
| 8 | Սնուցման պլատայի փոխարինում նորով | 1056,51 |
| 9 | Սնուցման պլատայի վերանորոգում | 564,62 |
| 10 | Վառարանի Ռետինե լիսեռի փոխարինում նորով | 422,90 |
| 11 | Թղթի մատուցման ռետինե լիսեռի փոխարինում նորով | 353,92 |
| 12 | Ատամնանիվի փոխարինում նորով | 353,92 |
| | **Brother HL-3140 CW տպիչի** | |
| 1 | Դիագնոստիկա | 212,20 |
| 2 | Պրոֆիլակտիկա | 353,92 |
| 3 | Վերանորոգում | 705,21 |
| 4 | Վառարանի թերմոթաղանթի փոխարինում նորով | 422,90 |
| 5 | Մայր պլատաի (formator) փոխարինում նորով | 2114,89 |
| 6 | Մայր պլատաի (formator) նորոգում | 564,62 |
| 7 | Սնուցման պլատայի փոխարինում նորով | 1056,51 |
| 8 | Սնուցման պլատայի վերանորոգում | 564,62 |
| 9 | Վառարանի Ռետինե լիսեռի փոխարինում նորով | 422,90 |
| 10 | Թղթի մատուցման ռետինե լիսեռի փոխարինում նորով | 353,92 |
| 11 | Ատամնանիվի փոխարինում նորով | 353,92 |
| | **Canon IR-2425 լազերային տպիչի** | |
| 1 | Դիագնոստիկա | 524,13 |
| 2 | Պրոֆիլակտիկա | 524,13 |
| 3 | Վերանորոգում | 5239,43 |
| 4 | Վառարանի թերմոթաղանթի փոխարինում նորով | 2881,59 |
| 5 | Մայր պլատաի (formator) փոխարինում նորով | 7858,96 |
| 6 | Մայր պլատաի (formator) նորոգում | 3929,48 |
| 7 | Սնուցման պլատայի փոխարինում նորով | 2095,77 |
| 8 | Սնուցման պլատայի վերանորոգում | 1309,95 |
| 9 | Վառարանի Ռետինե լիսեռի փոխարինում նորով | 3143,66 |
| 10 | Թղթի մատուցման ռետինե լիսեռի փոխարինում նորով | 786,20 |
| 11 | Ատամնանիվի փոխարինում նորով | 786,20 |
| | **Lexmark E260 լազերային տպիչի** | |
| 1 | Դիագնոստիկա | 524,13 |
| 2 | Պրոֆիլակտիկա | 524,13 |
| 3 | Վերանորոգում | 2095,77 |
| 4 | Վառարանի թերմոթաղանթի փոխարինում նորով | 2095,77 |
| 5 | Վառարանի նորոգում | 2095,77 |
| 6 | Մայր պլատաի (formator) փոխարինում նորով | 5239,43 |
| 7 | Սնուցման պլատայի փոխարինում նորով | 1572,02 |
| 8 | Սնուցման պլատայի վերանորոգում | 1309,95 |
| 9 | Վառարանի Ռետինե լիսեռի փոխարինում նորով | 2095,77 |
| 10 | Թղթի մատուցման ռետինե լիսեռի փոխարինում նորով | 786,20 |
| 11 | Ատամնանիվի փոխարինում նորով | 786,20 |
| | **Epson M200 տպիչի** | |
| 1 | Դիագնոստիկա և պրոֆիլակտիկա | 786,20 |
| 2 | Թղթի մատուցման ռետինե լիսեռի փոխարինում նորով | 786,20 |
| 3 | Տպիչի գլխիկի վերանորոգում | 1572,02 |
| | ԸՆԴՀԱՆՈՒՐ ՀԱՆՐԱԳՈՒՄԱՐԸ | 199999 |

Հաղթողը որոշվելու է միավորների գների ընդհանուր հանրագումարով նվազագույն առաջարկ ներկայացրած մասնակցին նախապատվություն տալու սկզբունքով:

Գնման պայմանագիրը կնքվելու է նախահաշվով նախատեսված ամբողջ գումարով:

2-րդ չափաբաժնի տեխնիկական պայմանները.

## ՎԳ=ՄԳ/ՆԳxԾxՔ, գործակիցն արդեն կիրառված է. ըստ բանաձևի՝

| Գնման առարկայի որակական և այլ բնութագրիչ հատկանիշները | | |
|---|---|---|
| Կատարողը պետք է իրականացնի լազերային տպիչների (պատճենահանող սարքեր, սքաներ) քարտրիջների լիցքավորում տոներով, անհրաժեշտության դեպքում լիցքավորումից առաջ պետք է իրականացնի նաև քարտրիջի թմբուկի փոխարինում նորերով: Ծառայության ընթացքում օգտագործվող պահեստամասերի և նյութերի արժեքները ներառվում են ծառայությունների ընդհանուր գնի մեջ: Ծառայությունների մատուցումը իրականացվում է Պատվիրատուի մոտ՝ ք. Երևան, Արմենակյան 108/4 հասցեով կամ Կատարողի ցանկությամբ իր տարածքում, որի դեպքում տեղափոխությունը երկողմանի ապահովում է կատարողը: Քարտրիճները պետք է պատրաստ վիճակում հետ հանձնվեն Պատվիրատուին պահանջ ներկայացնելու օրվանից ոչ ուշ քան 3 **աշխատանքային** օրվա ընթացքում: | | |
| **կիրառվող գործողությունների գնացուցակը** | | |
| Սարքավորման տեսակը | քարտրիջի լիցքավորում տոներով | քարտրիջի թմբուկի փոխարինում նորով |
| Canon IR2425 տպիչի քարտրիջ | 2579,93 (տուբայի փոխարինում նորով) | 1289,96 |
| Lexmark E260 տպիչի քարտրիջ | 1109,37 | 942,53 |
| Canon 070H | 2364,93 | 601,98 |
| Epson M664 | 1289,96 | |
| Canon Fx10 | 387,85 | 258,85 |
| Canon EP-26 | 387,85 | 258,85 |
| Canon 737 | 387,85 | 258,85 |
| HP 17A | 387,85 | 258,85 |
| HP 2612 | 387,85 | 258,85 |
| HP 85A | 387,85 | 258,85 |
| HP 725 | 387,85 | 258,85 |
| HP 508A | 387,85 | 258,85 |
| CF 217A | 387,85 | 258,85 |
| ԸՆԴՀԱՆՈՒՐ ՀԱՆՐԱԳՈՒՄԱՐԸ | 15999 | |

Հաղթողը որոշվելու է միավորների գների ընդհանուր հանրագումարով նվազագույն առաջարկ ներկայացրած մասնակցին նախապատվություն տալու սկզբունքով:

Գնման պայմանագիրը կնքվելու է նախահաշվով նախատեսված ամբողջ գումարով:

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**

<<Նորք Մարաշ>> բժշկական կենտրոն>> ՓԲԸ
ք. Երևան, Արմենակյան 108/4
ՀՎՀՀ 01508793
<<ԱՄԲՕ ԲԱՆԿ>> ՓԲԸ
Հ/Հ 1150001612200100

/ստորագրություն/
Կ.Տ

**ԿԱՏԱՐՈՂ**

ԿԱՏԱՐՈՂ
Լևոն Ղազարյան Ա/Ձ
ՀՀ Արագածոտնի մարզ, գ. Աշնակ, Վրեժ Իսրաելյան փ. 77տուն
ՀՎՀՀ 54696665
բանկ [illegible]
հհ 220579675319000
levon.khazaryan93@mail.ru
095-80-83-64
Լ. Ղազարյան

Հավելված N 2
« 05 » դեկտեմբերի 2025 թ. կնքված
ՆՄԲԿ-ԳՀԾՁԲ-26/10 ծածկագրով պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

| Գնման առարկայի | | | |
|---|---|---|---|
| հրավերով նախատեսված չափաբաժնի համարը | գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը` ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | անվանումը | դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2026 թ-ին` ընդ որում |
| բոլորը | բոլորը | **տպիչ սարքավորումների վերանորոգման և պահպանման ծառայություններ** | Ֆինանսական միջոցները նախատեսված չեն և ժամանակացույցը հաստատվում, կնքվում է ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում:<br><br>**Ընդունել ի գիտություն**, որ նախատեսվելուց հետո Ֆինանսական միջոցները հատկացվելու են սահմանված կարգով ծառայությունների արդյունքն ընդունելու օրվան հաջորդող 60 օրվա ընթացքում և վճարումն իրականացվելու է 5 աշխատանքային օրում: |

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**

<<Նորք Մարաշ>> բժշկական կենտրոն>> ՓԲԸ
ք. Երևան, Արմենակյան 108/4
ՀՎՀՀ 01508793
<<ԱՄԻՕ ԲԱՆԿ>> ՓԲԸ
Հ/Հ 1150001612200100

/ստորագրություն/
Կ.Տ

**ԿԱՏԱՐՈՂ**

Կ Ա Տ Ա Ր Ո Ղ
Լևոն Ղազարյան Ա/Ձ
ՀՀ Արագածոտնի մարզ, գ. Աշնակ, Վրեժ
Իսրաելյան փ. 77տուն
ՀՎՀՀ 54696665
բանկ "Ակբա բանկ" ԲԲԸ
հհ 220579675319000
levon.khazaryan93@mail.ru
095-80-83-64
Լ. Ղազարյան

(ստորագրություն)

Կ.Տ.

*Հավելված 3*
*«   »   2025 թ. կնքված*
*ՆՄԲԿ-ԳՀԾՁԲ-26/10 ծածկագրով պայմանագրի*

Պայմանագրի կողմ
______________________________
______________________________
գտնվելու վայրը ______________
հհ ___________________________
հվհհ _________________________

Պատվիրատու
______________________________
______________________________
գտնվելու վայրը ______________
հհ___________________________
հվհհ_________________________

## ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
## ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

*«   » «   » 20   թ.*

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝
__________________________________________________________________________

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «___________________» 20 թ.
Պայմանագրի համարը՝ ___________
Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ « » « » 20 թ. դուրս գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատուցել է հետևյալ ծառայությունները՝

| N | Մատուցված ծառայությունների | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | անվանումը | տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը | քանակական ցուցանիշը | | կատարման ժամկետը | | Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/ | Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/ |
| | | | ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի | փաստացի | ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի | փաստացի | | |
| | | | | | | | | |
| | | | | | | | | |

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ծառայությունը հանձնեց
______________________
ստորագրություն
______________________
ազգանուն, անուն
Կ.Տ.

Ծառայությունն ընդունեց
______________________
ստորագրություն
______________________
ազգանուն, անուն
Կ.Տ.

*Հավելված 3.1*
*«      »              2025 թ. կնքված*
*ՆՄԲԿ-ԳՀԾՁԲ-26/10 ծածկագրով պայմանագրի*

ԱԿՏ N
պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _______________-ի (այսուհետ՝ Պատվիրատու) և ____________-ի
Պատվիրատուի անունը Կատարողի անունը

(այսուհետ՝ Կատարող) միջև 20 թ. ________________________ -ին կնքված N ________________________
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը

գնման պայմանագրի շրջանակներում Կատարողը 20 թ. ____________-ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված ծառայությունները.

| Ծառայության | | |
|---|---|---|
| անվանումը | չափման միավորը | քանակը (փաստացի) |
| | | |
| | | |

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

КՈՂՄԵՐԸ

**Հանձնեց**

_______________________________
ազգանուն, անուն
_______________________________
ստորագրություն

**Ընդունեց**
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_______________________________
ազգանուն, անուն
_______________________________
ստորագրություն

*Հավելված 4*
*«     »          2025 թ. կնքված*
*ՆՄԲԿ-ԳՀԾՁԲ-26/10 ծածկագրով պայմանագրի*

ԾԱՆՈՒՑՈՒՄ

________________հայտնումէ, որ.
ֆինանսական գործակալիանվանումը

1. ________________________________-ի և __________________________-ի միջև«--»    20 թ. կնքված
պատվիրատուի անվանումը    կատարողի անվանումը

«---------/----------» ծածկագրով պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) շրջանակում իր և

________________________-իմիջև «----» 20 թ-ին կնքվել է «---------------------» ծածկագրով ֆակտորինգի
կատարողի անվանումը
պայմանագիրը,

2. համաձայն է Պայմանագրի 7.12 կետով սահմանված պահանջներին:

____________________________________________  ______________
ֆինանսական գործակալի անվանումը (ղեկավարի պաշտոնը, անուն ազգանունը)
ստորագրությունը

Կ. Տ.(առկայության դեպքում)

«--»    20 թ.